## ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 1.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով. քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 971 տեղեկանքներ.

### 2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով կազմակերպվել և հավաքագրվել է հողի հարկ՝ 4995.8 հազ. դրամ , գույքահարկ՝ 647.8 հազ. դրամ, տեղական տուրք՝ 318.5 հազ.դրամ, այլ ոչ հարկային եկամուտներ՝ 1986.1 հազ. դրամ:

### 3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի բյուջեի միջոցներով կատարվում է 2 բազմաբնակարան եռահարկ շենքերի տանիքների ընթացիկ նորոգում:
- Սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն.
- կազմակերպվել է համայնքի աղբահանությունը.
- Համայնքի բյուջեի միջոցներով կատարվել է կենտրոնական փողոցի լուսավորության աշխատանքները:
- Ընթացքի մեջ է համայնքի խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքները:

### 4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Աջակցություն է ցուցաբերվել զորակոչին, զորակոչվել է հայկական բանակ 15 զորակոչիկ:
- Միջոցներ է ձեռնարկվել զոհված ազատամարտիկների ընտանիքների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

### 5. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

### 6. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:
- Տրվել է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տան, գրադարանի գործունեությունը:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ (ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ 24.04, հաղթանակի և խաղաղության օր՝09.05, Հանրապետության տոն 28.05, Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ 01.06):

8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների գործունեությունը:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:

10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության , հակահամաճարակային միջոցառումները:
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Տեխնիկական ջրի ներքին ցանցի վերանորոգում.
- Գյուղապետարանի շենքի վերանորոգում.
- Թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգում.
- Թվով 3 եռահարկ շենքերի տանիքների ընթացիկ նորոգում.
- Խմելաջրի բացակայություն.
- Ճանապարհների ասֆալտապատում.
- Փողոցների լուսավորում.
- Հակակարկտային կայանների տեղադրում:
- Բնակֆոնդի բարելավում.

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱՐԹԵՆՅԱՆ

2017թվական հուլիս 18

գ. Քարակերտ